ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2018-2020թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մարտ)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ. հունվար-մարտ ամիսներին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 104.0%, 2019թ. հունվար-մարտին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.2%, իսկ 2018թ. հունվար-մարտին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 110.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 450,400.6 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 26,608.5 մլն դրամով և 49,885.8 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 43,914.3 մլն.դրամ, ինչը 2019 թվականի և 2018 թվականի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 3,813.9 մլն դրամով և 607.6 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 657,530.4 մլն.դրամ, ինչը 2019 թվականի և 2018 թվականի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5,817.7 մլն. դրամով և 79,297.5 մլն. դրամով, իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար- մարտին կազմել է 452,359.3 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 30,782.2 մլն. դրամով և 95,892.1 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 108.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.0%-ի և 108.2%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 90.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.8%-ի և 123.0%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 100.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.1%-ի և 112.9%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 105.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.3%-ի և 116.5%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 87,124.0 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 13,235.0 և 5,620.7 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 284,982.4 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7,054.7 և 42,587.4 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 73,324.0 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7,410.8 և 2,727.3 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 4,970.2 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 1,092.0 և 1,049.6 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 126.9%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 95.5%-ի և 92.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 103.8%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.5%-ի և 118.4%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 111.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.9%-ի և 97.4%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 82.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.8%-ի և 97.8%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ



Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 113,188.7 մլն. դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 9,588.3 և 40,696.1 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 66,484.6 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4,406.6 և 9,023.6 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-մարտին կազմել է 113,758.3 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 16,327.0 և 32,336.4 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 108.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 140.0%-ի և 119.8%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 106.4%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.0% և 108.4%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-մարտին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 112.9%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 120.3%-ի և 117.3%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2020թ. հունվար-փետրվարին 2019թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 99.9%, 2019թ. հունվար-մարտին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.5%, 2018թ. հունվար-մարտին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 103.3%: ՍԳԻ-ն 2020թ. մարտին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.7%, 2019թ. մարտին 2018թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 102.6%, 2018թ. մարտին 2017թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2020թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 988,239.0 մլն դրամ, ինչը 268,268.0 մլն. դրամով կամ 37.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 367,164.0 մլն. դրամով կամ 59.1%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2020թ. մարտի դրությամբ կազմել է 85890 մարդ, ինչը 3172 մարդով կամ 3.8%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2379 մարդով կամ 2.8%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2020թ. մարտի դրությամբ կազմել է 61715 մարդ, ինչը 3314 մարդով կամ 5.1%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7062 մարդով կամ 10.3%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2020թ. հունվար-մարտին կազմել է 1,565.1 մլն. դոլար, ինչը 66 մլն. դոլարով կամ 4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 150.1 մլն. դոլարով կամ 8.8%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2020թ. հունվար-մարտին կազմել է -475.2 մլն. դոլար, ինչը 68.3 մլն. դոլարով կամ 12.6%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 51.3 մլն. դոլարով կամ 9.7%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2020թ. հունվար-մարտին կազմել է 544.9 մլն դոլար, ինչը 1.1 մլն. դոլարով կամ 0.2%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 49.4 մլն. դոլարով կամ 8.3%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2020թ. հունվար-մարտին կազմել է 1,020.2 մլն դոլար, ինչը 67.2 մլն. դոլարով կամ 6.2%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 100.7 մլն. դոլարով կամ 9%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2020թ. հունվար-մարտին կազմել է 190136 դրամ, ինչը 16067 դրամով կամ 9.2%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 19121 դրամով կամ 11.2%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2020թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 38,953.3 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -1,363.6 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -37,589.7 մլն. դրամ: 2019թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 31,245.7 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -5,387.1 և -25,858.6 մլն դրամ: 2018թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -26,277.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 46,336.6 և -20,059.5 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ